Հավելված N 1
ՀՀ կառավարության 2024 թվականի
օգոստոսի 15-ի N 1274 - Ն որոշման

«Հավելված N 1
ՀՀ կառավարության 2019 թվականի
մայիսի 30-ի N 685-Ն որոշման

Ց Ա Ն Կ

ԴԱՏԱՎՈՐԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿՄԱՆԸ, ՆՇԱՆԱԿՎԵԼՈՒՑ ՀԵՏՈ ՊԱՇՏՈՆԱՎԱՐՄԱՆԸ ԽՈՉԸՆԴՈՏՈՂ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՎԻՃԱԿՆԵՐԻ

1. Հոգեկան և վարքային խանգարումներ (F00-F09, F10.1-F10.9, F11.1-F11.9, F12.1-F12.9, F13.1-F13.9, F14.1-F14.9, F15.1-F15.9, F16.1-F16.9, F18.1-F18.9, F19.1-F19.9, F20-F29, F30-F39, F44.1, F44.2, F44.3, F44.6, F44.8, F60, F61, F63, F70-F79, F80-F89):

2. Կենտրոնական նյարդային համակարգի քրոնիկ պրոգրեսիվող և կայուն նյարդաբանական դեֆիցիտով նեյրոդեգեներատիվ հիվանդություններ, գլխուղեղի արյան շրջանառության սուր խանգարումների հետևանքներ, տետրապլեգիա, դեմենցիա (G10, G23.1, G30, G31):

3. Կողմնային ամիոտրոֆիկ սկլերոզ՝ շարժողական ֆունկցիայի արտահայտված խանգարումով (G35):

4. Էպիլեպսիա՝ դեղորայքակայուն ձև չհսկված նոպաների առկայությամբ (G40):

5. Հիպերսոմնիաներ, նարկոլեպսիա (կատապլեքսիայով և առանց կատապլեքսիայի), Կլեյն-Լևինի համախտանիշ՝ արտահայտված ցերեկային քնկոտության բարձր և չշտկվող մակարդակի պարագայում (G47.1, G47.4, G47.8):

6. Նյարդային համակարգի բնածին (զարգացման) արատներ (Q00-Q04, Q06, Q07):

7. Ձարկերակային գերճնշում՝ բարդացված նյարդային կենտրոնական համակարգի, սրտամկանի, ակնահատակի, երիկամների ախտահարումով, խիստ արտահայտված ֆունկցիաների խանգարումով, դեկոմպենսացված փուլում (I10):

8. Սրտային անբավարարություն՝ դիստրոֆիկ փուլում, բարդացված ասցիտով, անասարկայով (I50):

9. Շաքարային դիաբետ երիկամների ախտահարումով, երիկամային քրոնիկ հիվանդություն, փուլ 5 (E10-E14.2† (N08.3*):

10. Չարորակ նորագոյացություններ 4-րդ փուլում՝ մետաստատիկ քայքայումով (C00):

11. Արյան չարորակ հիվանդություններ՝ 4-րդ փուլում, բուժման ոչ ենթակա ձևերով (C81-C96):

12. Շնչառական օրգանների տուբերկուլյոզ՝ հաստատված մանրէաբանորեն կամ հյուսվածքաբանորեն, շնչառական օրգանների տուբերկուլյոզ՝ չհաստատված մանրէաբանորեն, նյարդային համակարգի տուբերկուլյոզ, այլ օրգանների տուբերկուլյոզ, միլիար (կորեկանման) տուբերկուլյոզ (A15-A19):

13. Երիկամային քրոնիկ հիվանդություն, փուլ 5 (N18.5):

14. Վեստիբուլյար (նախադռնային) ֆունկցիայի խանգարման ծանր աստիճան (H81):

15. Երկու ականջի կայուն լրիվ խլություն կամ խուլհամրություն (H91):

16. Երկու աչքերի (բինօկուլյար) կուրություն (H54.0):»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

15.08.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ